600.082.20.04.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2016 թվականի №82Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԱՐԵԿԱՄԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի մարտի 14-ի N04-ԿՀ-02/816 գրությունը և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Աղստև» մասնաճյուղի, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բարեկամավան գյուղի գյուղապետարանի և «Ազաթ-777» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Կողմեր) կողմից կազմված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եռակողմ պայմանագիրը և, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բարեկամավան գյուղի գյուղապետարանին պատկանող տարածքի սպառման համակարգը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին (այսուհետ՝ Էլեկտրական ցանց) միացվում է եռակողմ կնքված պայմանագրով՝ Կողմերի միջև փոխհամաձայնեցված կարգով.
   2) Էլեկտրական ցանցին միացման վճարը հաշվարկվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող

հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշման.

3) Էլեկտրական ցանցին միացման պայմանագիրը կնքվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված միացման պայմանագրի կնքման օրվանից մինչև Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բարեկամավան գյուղի գյուղապետարանին էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.5 կետի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
20 ապրիլի 2016թ.
ժամը 16⁰⁰